media max

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Մեդիա-մոնիտորինգային ծառայությունների վճարովի մատուցման մասին
թիվ N 080120-մ1

ք. Երևան **08-ը հունվարի, 2020 թ.**

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս գործադիր տնօրեն Մ. Գրիգորյանի, մի կողմից, և «Մեդիամաքս Մեդիա Քոմփանի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Ա. Թադևոսյանի, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պատվիրատուն հանձնարարում, իսկ Կատարողը իրականացնում է Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային լրատվամիջոցների ամենօրյա ուսումնասիրություն, մոնիթորինգ, անհրաժեշտ տվյալների ամփոփում և ներկայացում Պատվիրատուին (այսուհետ՝ Ծառայություններ):
1.2. Պատվիրատուն Համակարգի միջոցով ստացված տեղեկությունը օգտագործում է սեփական կարիքների համար և իրավունք չունի այն վերավաճառել (փոխանակել) ուրիշ ձեռնարկությունների, կազմակերպությունների, այլ ֆիզիկական և իրավաբանական անձանց, տեղադրել Ինտերնետում:

2. Կողմերի իրավունքներն և պարտավորությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝
2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով և սահմանված ժամկետներում՝ Պայմանագրի պահանջներին համապատասխան:
2.1.2. Ծառայությունները մատուցել անձամբ:
2.1.3. Պատվիրատուի պահանջով 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները:
2.2. Կատարողը իրավունք ունի՝
2.2.1. Ծառայությունների մատուցման համար պահանջել Պայմանագրով նախատեսված կարգով և չափով վարձատրություն:
2.2.2. Պատվիրատուից պահանջել ժամանակին տրամադրել Ծառայությունների պատշաճ մատուցման նպատակով տվյալ Ծառայությանն առնչվող և պահանջվող փաստաթղթերը և տեղեկությունները:
2.2.3. Ծառայությունների մատուցման ընթացքում կամ դրանք մատուցելուց հետո Պատվիրատուին տրամադրել մատուցված ծառայությունների հաշիվ-ապրանքագիրը:
2.3. Պատվիրատուն պարտավոր է՝
2.3.1. Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում վճարել Կատարողին մատուցված Ծառայությունների դիմաց:
2.4. Պատվիրատուն իրավունք ունի՝
2.4.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից Ծառայությունների մատուցման ընթացքը և պահանջել Ծառայությունների մատուցման ընթացքի մասին հաշվետվություն՝ առանց միջամտելու նրա գործունեությանը:
2.4.2. Պահանջել Ծառայությունների մատուցման ընթացքում Կատարողի կողմից թույլ տրված թերությունների վերացում՝ ողջամիտ ժամկետներում:
2.4.3. Պայմանագրի շրջանակներում առաջարկություններ անել՝ կապված Ծառայությունների մատուցման հետ:

3. Ծառայությունների դիմաց վճարման և փոխհաշվարկների իրականացման կարգը և ժամկետները

3.1. Ծառայությունների մատուցման համար ամսական վճարման ենթակա գումարը կազմում է 80.000 (ութսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:
3.2. Վճարումն իրականացվում է համապատասխան հարկային հաշիվ ներկայացնելուց հետո՝ 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում:

3.3. Պայմանագրով վճարումները համարվում են կատարված Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցման պահից:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, ինչպես նաև պատճառված վնասների համար Կողմերը պատասխանատվություն են կրում սույն Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
4.2. Կատարողը Պայմանագրում նշված Ծառայությունները անպատշաճ մատուցելու դեպքում վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.1%-ի չափով՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար, սակայն ոչ ավել, քան Պայմանագրի գնի 10%-ը:
Վճարման կատարումը ուշացնելու դեպքում Պատվիրատուն Կատարողին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.1%-ի չափով՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար, սակայն ոչ ավել, քան Պայմանագրի գնի 10%-ը:
4.3. Պայմանագրով նախատեսված տույժի վճարումը Կողմին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտավորությունից:
4.4.Կատարողը իրավունք ունի հրաժարվել Պայմանագիրը կատարելուց՝ Պատվիրատուի վնասները լրիվ հատուցելու պայմանով:
4.5.Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծել Պայմանագիրը՝ այդ մասին 10 (տասը) օր առաջ գրավոր ծանուցելով Կատարողին՝ Կատարողի փաստացի կատարած ծախսերը վճարելու պայմանով:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

5.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող նախատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 30 (երեսուն) օրից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին: Կողմերը միմյանց են վերադարձնում մինչև անհաղթահարելի ուժի վրա հասնելը Պայմանագրով ստացվածն ամբողջությամբ:

6. Կարգավորող օրենսդրությունը և վեճերի լուծման կարգը

6.1. Պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
6.2. Պայմանագրի կապակցությամբ և դրանից ծագած բոլոր վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով՝ 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Սահմանված ժամկետում համաձայնության չգալու դեպքում, յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի վեճի լուծումը հանձնել ՀՀ տարածքում իրավասու դատարանի քննությանը:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում 2020թ. հունվարի 1-ին և գործում է մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը:
7.2. Պայմանագրի գործողության ժամկետը կհամարվի երկարացված, եթե կողմերը պայմանագիրը գործողության ժամկետը լրանալուց հետո կկնքեն այդ մասին լրացուցիչ համաձայնագիր՝ պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Այն Կողմը, որն ի վիճակի չէ կատարել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, պարտավոր է նախապես՝ 10 (տասը) օր առաջ այդ մասին գրավոր

8.2. Պայմանագրի ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե այն ձևակերպված է գրավոր և ստորագրված երկուստեք:
8.2 Կողմերից որևէ մեկն իրավունք չունի սույն Պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցել երրորդ անձի՝ առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության:
8.3. Սույն Պայմանագիրը կազմված է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ. յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

9. Կողմերի ստորագրությունները և վավերապայմանները

Պատվիրատու	Կատարող
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	«Մեդիամաքս մեդիա քոմփանի» ՍՊԸ
ք. Երևան, Գ. Հովսեփյան փող., 26 շենք	ք. Երևան, Աբովյան 8, 2-րդ հարկ
հեռ. 65-00-15	հեռ. 54-45-31, Ֆաքս. 54-54-37
«Արդշինբանկ» ՓԲԸ	«Յունիբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470102796740000	Հ/Հ 24149000046000
ՀՎՀՀ 01540062	ՀՎՀՀ 00144609
Գործադիր տնօրեն՝	Տնօրեն
Մ. Գրիգորյան	Ա. Թադևոսյան